

Ինտեգրալ համեմատական առավելությունների առկայությունը չի հիմնավորվում աղամանդագործության և լեռնամետալուրգիական ոլորտներում: Թեև որոշ ապրանքների արտահանումը կարելի է նպատակահարմար դիտել, բնդիանոր առնամք, այս ոլորտներուն մասնագիտացումը հեռանկարային չէ, համենայնդեպս ներկա միտումներով: Նկատենք, որ նշված երկու ոլորտների արտահանումը միասին կազմում է արտահանման ավելի քան 50%-ը: Նոյնիսկ չափազանց մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրներն իրենց քոյլ չեն տալիս հումքի ուղղակի արտահանում այն դեպքում, եթե երկրում առկա է դրանց նկատմամբ պահանջարկ և իրացման լայն հնարավորություններ: Ինչ վերաբերում է աղամանդագործության և ոսկերչության ոլորտին, ապա այստեղ մասնագիտացումը պետք է ընթանա ավելի շուտ ոսկերչական իրերի, քան աղամանդի վերամշակման արտադրությունում, քանի որ այդ ենթաճյուղում առկա են առավելություններ աշխատուժի որակի, հումքային ներուժի, արտաքին շուկայում բարձր պահանջարկի և մյուս գործոնների առումով: Վերամշակված աղամանդի արտահանումը կարող է նպատակահարմար համարվել միայն այն դեպքում, եթե հիմնական արտադրանքը ծառայի ոսկերչության և հարակից արտադրությունների զարգացմանը: Բացի այդ, անհրաժեշտ է վերամշակված աղամանդը ոչ թե որպես հումք վերադարձնել մատակարարներին, այլ վաճառել այն միջազգային շուկայում տվյալ պահին ձևավորված գներով: Հակառակ դեպքում ստացվում է, որ Հայաստանը ոչ թե աղամանդ է արտահանում, այլ էժան աշխատուժ:

Իհարկե, «տնտեսական սկզբունքները հեշտությամբ չեն ենթարկվում սուրյեկտիվ ցանկությունների չափումներին»¹: Բայց համապատասխան հիմնավորումների առկայությունն ավելի, քան բավարար է, սուրյեկտիվ գործոնը նշանակալի համարելու համար, հատկապես, եթե խոսքը վերաբերում է ազգային տնտեսության առաջնահերթություններին: Ինչ խոսք, անհնար է անմիջապես հրաժարվել արտահանման 2/3-ն ապահովող արտադրություններից, ուստի, հարկ է աստիճանաբար դրանք ուղղորդել առավելապես ներքին պահանջարկի բավարարմանը և «համեմատական առավելություն չունեցող» արտադրություններից անցնել «համեմատական առավելություններ ունեցող» արտադրություններին:

ԼԵՆՍ ՀՈՎՀԱՅՆԻՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.*

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ տնտեսական քաղաքականության շուկայական կողմնորոշման արդյունքում, ազգարային ոլորտում ձևավորվել են ազատական տնտեսական հարաբերություններ:

Սեփականության և տնտեսավարման բազմաձևությունը, ապրանքների և գների ազատականացումը, պետության աջակցության սահմանափակության պայմաններում, հիմք ընդունելով գյուղատնտեսական ոլորտի առանձնահատկությունները, առավել իրական է արտահայտվում յուրաքանչյուր տարածաշրջանի և արտադրող սուրյեկտի մրցակցային հնարավորությունների անհավասարությունը:

ՀՀ անկախ պետության հաստատումից հետո, նոր սահմանադրության 104 հոդվածով, դրանք վարչատարածքային միավորներ, սահմանվել են նարգերը և համայնքները: Առանձնացված են 10 մարզեր, իսկ դրանց կազմում 925 համայնք: Երևան քաղաքը նույնպես ունի համայնքի կարգավիճակ 12 քաղային համայնքներով:

Հանրապետության գյուղական համայնքների միջև առկա են էական տարրերություններ, որոնք պայմանավորված են բնակչության թվաքանակով, իրենց պատկանող հողատարածք-

¹ Ո.Ն. Սարինյան, Արդի հայ տնտեսագիտության տեսություն, Երևան, 2003, էջ 82:

ներով, բնակլիմայական պայմաններով, սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներով և տրամադրվող ֆինանսական միջոցներով:

Հայաստանում իրականացվում են մի շարք համապետական, տարածքային, համայնքային զարգացման ռազմավարական ծրագրեր, որոնք ուղղված են գյուղատնտեսության զարգացմանը, գյուղական ենթակառուցվածքների կառուցմանը և վերականգնմանը, տնտեսության աջակցությանը:

Ինչ խոսք, միայն գյուղացիական տնտեսությունների արդյունավետության բարձրացմամբ և ենթակառուցվածքների կառուցմամբ հնարավոր չէ ապահովել բնակչության բարձր կենսամակարդակը: Հանրապետության տարածաշրջանների համաշափ զարգացումը տնտեսության պետական կարգավորման դժվարին հիմնահարցերից մեկն է: Գործարարության եկամտաբերության տեսանկյունից միանգանայն տրամաբանական է, որ արտադրության գործոնների մատչելիության պայմաններում ներդրումները առավելապես կենտրոնացվում են Երևանում և մայրաքաղաքին մոտ տարածաշրջաններում:

2009թ. համայնքների բյուջեների եկամուտների մոտ 1/3-ը կազմում են Երևան քաղաքի ընդհանուր եկամուտները: Գյուղական համայնքների բյուջեների եկամուտներում մեծ տեսակարար կշիռ ունեն պետության կողմից տրամադրվող տրամադրությունները, միջինը մոտ 50 տոկոս և ըստ բյուջեների կառուցվածքի՝ եկամուտներում մեծ տեսակարար կշիռ ունեն ֆինանսական համահարթեցման դուտացիաները:

Գյուղատնտեսական զարգացման պետական կարգավորիչ գործիքը սուբսիդավորումն է, որի նպատակն է ձևավորել գյուղատնտեսական սուբյեկտների գործունեության համար նպաստավոր միջավայր և ստեղծել ճյուղի գերակա ուղղությունների զարգացմանը նպաստող պայմաններ: Անհրաժեշտ խնդիրներից են՝ սուբսիդավորման անհրաժեշտությունը, նրա ուղղությունները, իրականացման մեխանիզմները և արդյունքները;

Հայաստանի տնտեսական ազգատականացման պայմաններում ազրարային ոլորտը, հեռանկարում, միջազգային մրցունակության ուժեղացման պայմաններում, կարող է հայտնվել ավելի վատ վիճակում, եթե ժամանակին չձեռնարկվեն սուբսիդավորման և նաև արտադրողների շահերի պաշտպանության միջազգային պրակտիկայում կիրառվող այլ միջոցներ և գործողություններ:

Ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) չափանիշների՝ գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորումը տարանջատվում է՝ կանաչ, դեղին, կապույտ զամբյունների, որոնք ունեն հետևյալ նշանակությունը՝

«Կանաչ զամբյուղ»-ի շրջանակներում ներառվում է շրջակա միջավայրի պահպանման, բույսերի և կենդանիների հիվանդությունների և վնասատունների դեմ պայքարի, ենթակառուցվածքների զարգացման, կրթության, մասնագետների ուսուցման, եկամուտների ապահովագրման, վատ բնակչիմայական էկոլոգիական և տնտեսական պայմաններում գտնվող տարածաշրջանների աջակցությունը, տարերային աղետների դեպքում աջակցությունը և երկրի ներառման պարենային օգնության տրամադրումը:

«Դեղին զամբյուղ»-ի շրջանակներում են գյուղատնտեսական արտադրանքի և նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման, գների կարգավորման աջակցությունը, քանի որ սա որոշ չափով խարարում է մրցակցային պայմանները, ենթարկվում է սահմանափակումների:

«Կապույտ զամբյուղ»-ը չի ենթարկվում սահմանափակումների, եթե տրամադրվում է առանձին արտադրանքների հաստատված չափաքանակներին չգերազանցող արտադրության կարգավորմանը, իսկ գյուղատնտեսական գործունեության իրականացների եկամուտների ավելացման դեպքում, այս որոշ չափով սահմանափակվում է:

2011թ. ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորման կարգին համապատասխան գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել է 14.0% վարկեր, որից 4%-ը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ ավելի կարիքավոր 225 համայնքի համար՝ 6%: Այս նպատակով տրամադրվել է 25 հազար միավոր վարկ՝ 17.4 մլրդ դրամի չափով.

Գյուղատնտեսության արտադրության սուբսիդավորման արդյունավետ համակարգի մշակումը և օգտագործումը կնպաստի գյուղատնտեսական արտադրության օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարածքային տարբերությունների մեղմմանը և գործունեության համար հավասար պայմանների ստեղծմանը: Այն կարող է դրական ազդեցություն ունենալ գյուղա-

ցիական տնտեսությունների արտադրանքի կառուցվածքի վրա՝ խրախուսելով բարձր մրցունակություն ունեցող գյուղմթերքի արտադրության ավելացմանը և ապրանքայնության բարձրացմանը:

ՀՀ 2010թ. ապրանքայնության միջին մակարդակը գյուղացիական տնտեսություններում կազմել է 55.8 տոկոս: Այն տարբեր է, եթե լով մարզերում գյուղատնտեսական մթերքների արտադրության կառուցվածքից և իրացման պայմաններից:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում 2006-2011թթ. կատարված գյուղատնտեսական հումքի գնումների ծավալները

հազ. տոննա

Գյուղատնտեսական մթերքներ	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Բանջարեղեն	67.6	57.1	39.0	32.3	29.7	51.0
Պտուղ	13.2	14.8	19.4	11.2	3.6	14.1
Խաղող	106.1	144.4	137.4	127.7	135.0	129.0

2011թ. վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 51.0 հազ. տ բանջարեղեն, 14.3 հազ. տ պտուղ, որը գերազանցում է նախորդ տարվա մթերումների ծավալները համապատասխանաբար՝ 1.7 և 3.9 անգամ: Խաղողի մթերումները՝ 129.0 տ, մթերվել է 40 ընկերությունների կողմից: Հանրապետությունից արտահանվել է 16.9 հազար տ. պտուղբանջարեղեն, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը՝ 35.2%:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների իրացման կառուցվածքը 2010թ. տվյալներով¹

(տոկոսներով)

Գյուղատնտեսական մթերքների անվանումը	Գյուղացիական տնտեսությունների կողմից			Օգտագործվել է տնտեսությունում	Մնացորդը տնտեսությունում
	Վաճառվել է վարանքափոխանակման դիմաց	Տրվել է ապրանքափոխանակման դիմաց	Տրվել է բնամքերով ծառայությունների դիմաց		
1 Հացահատիկային և հատիկացնեղեններ մշակաբույսեր	15.8	6.0	2.0	38.7	37.5
2 Կարտոֆիլ	28.3	6.1	0.6	30.1	34.9
3 Բանջարեղեն	67.3	6.5	0.5	20.3	5.4
4 Բուսան	85.2	6.6	0	8.2	0
5 Պտուղ	26.9	6.9	1.2	36.0	29.0
6 Խաղող	84.5	4.7	0.5	7.8	2.5
7 Սիս	71.3	5.1	0.2	22.9	0.5
8 Կաթ և կաթնամթերք (վերածած կաթի)	44.7	4.3	0.4	41.4	9.2
9 Չոր	29.8	10.3	0.3	59.6	0
10 Բուրդ	28.1	9.5	0.3	22.8	38.3
11 Սեղի	44.9	4.6	0.7	31.6	18.2

Համայնքների հավասարակշռված և կայուն զարգացման համար կարևոր է սոցիալական կապիտալը, որի ստեղծման և զարգացման համար հիմք են հանդիսանում կրոպերատիվները, համայնքային և միջահամայնքային միավորումները, որոնք նպաստավոր պայմաններ կստեղծեն գյուղացիական տնտեսությունների ձևավորման, տեխնիկայի և արտադրության մյուս միջոցների առավել արդյունավետ օգտագործման և գյուղմթերքների իրացման համար: Նոր մթերող և վերամշակող ընկերություններ ստեղծելով, որոշ չափով կլուծվի գյուղերում աշխատումի գրադարձության խնդիրը:

¹ Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործման) գյուղացիական տնտեսությունների կողմից 2010 թվականին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, էջ 5-10:

Ըստ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն» վարկային ծրագրի, հանրապետության անասնապահությամբ մասնագիտացված 5 մարզի 33 համայնքներում ստեղծվել են սպառողական կոռպերատիվներ, 22-ում՝ գյուղատնտեսական կոռպերատիվներ:

Գյուղատնտեսական կոռպերացիայի համայնքային և միջիամայնքային միավորման գործընթացի զարգացմանը խթանելու նպատակով, անհրաժեշտ է գյուղատնտեսության համակարգում իրականացվող դրամաշնորհային վարկային ծրագրերի համապատասխան բաղադրիչների նպատակառություն գյուղատնտեսական կոռպերատիվների, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեության կազմակերպման ձևերի ստեղծմանը և ամրապնդմանը, գյուղատնտեսական մերժների վերամշակողներին նոր տեխնոլոգիաների ներդրմանը, շուկայահաննանը, սննդամթերքի անվտանգության պահանջների ապահովմանը:

2010թ. մարզերին տրամադրվող դրամաշնորհների միջոցով կատարված աշխատանքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 3 **2010թ. դրամաշնորհների միջոցով կատարված աշխատանքները¹** (ՀՀ մէն դրամով)

Մարզ	Գյուղտեխնիկայի և տրանսպորտի ձեռքբերում		Խմելու ջրի ցանցի բարեկարգություն		Ոռոգման համակարգի կառուցում		Գ-ազաֆիկացում		Այլ ծրագրեր		Ընդամենը մարզով	
	համայնքների համարություն	գումար	համայնքների համարություն	գումար	համայնքների համարություն	գումար	համայնքների համարություն	գումար	համայնքների համարություն	գումար	համայնքների համարություն	գումար
Արագածոտն	7	62.0	1	8.8	0	0	5	167.6	1	2.8	14	241.2
Լոռի	5	46.0	3	74.6	0	0	2	27.6	0	0	10	148.2
Սյունիք	0	0	2	35.4	0	0	0	0	2	41.4	4	76.8
Գեղարքունիք	3	32.3	2	48.4	2	82.6	0	0	1	7.3	8	170.6
Տավուշ	6	68.6	3	21.8	0	0	0	0	0	0	9	90.4
Շիրակ	11	81.4	1	20.4	0	0	5	58.4	1	46.3	18	206.5
Ընդամենը	32	290.3	12	209.4	2	82.6	12	253.6	5	97.8	63	933.7

Ըստ աղյուսակի տվյալների ներկայացված հիմնախնդիրները (գյուղտեխնիկայի և տրանսպորտի ձեռքբերում, խմելու ջրի, ոռոգման համակարգի, գազաֆիկացիայի) վերաբերում են մարզերի և համայնքների կայուն և հավասարաչափ զարգացմանը:

Գյուղատնտեսության ճյուղի համար լուրջ հիմնախնդիր է գյուղտեխնիկայի և տրանսպորտի ձեռքբերումը: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների մոտ 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է արտադրողականությունը և բարձր են շահագործման ծախսերն ու ծառայությունների սակագները:

Հրատապ պահանջ է տեխնիկայի համատեղ տնօրինման և օգտագործման անհրաժեշտությունը: Գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների գործընթացի բարեկարգությունը հնարավոր է տարբեր դրամաշնորհային և վարկային ծրագրերով, պետական աջակցությամբ հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկական միջոցների բազայի հիման վրա մերենատրակտորային կայանների ստեղծման և դրանց գործունեության ապահովման միջոցով:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական տեխնիկա արտադրող և մատակարարող ընկերությունների հետ պետության աջակցությամբ լիզինգային մեխանիզմներով տեխնիկական միջոցների ձեռքբերումը և գյուղատնտեսությունում տնտեսվարողներին տրամադրումը:

Բազում խնդիրներ կան խմելու ջրի մատակարարման ոլորտում: Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական տվյալների, գյուղական համայնքների ընդհանուր թվի 43.4 տոկոսն է ջրով ապահովված կենտրոնացված ջրամատակարարման համակարգի միջոցով: 46.8 տոկոսը

¹ Ըստ գյուղատնտեսական նախարարության տվյալների:

ունեն սեփական ջրամատակարարման համակարգ: 2.4 տոկոսը օգտվում են ջրհորերից, 1.3-ը գետերից, 5/4-ը բերովի ջրից: ՀՀ համայնքներում շատ է կարևորվում նաև ջրահեռացման հարցը:

Գյուղական համայնքներում ոռոգման ջրի դժվարին հիմնախնդիր ունի 706 համայնք: Ոռոգման ջրի անբավարարության պատճառով հանրապետությունում նպատակային նշանակությամբ չի մշակվում 32.0 տոկոս գյուղատնտեսական նշանակության հողատարածք: Վատ է վիճակը Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

Տեղական ինքնակառավարման մասին ՏԻՄ գործառույթների կազմում կարևոր դեր և նշանակություն ունի համայնքի ճանապարհային ենթակառուցվածքի պահպանությունը, բարեկարգումը, վերանորոգումը և զարգացումը: Համայնքների բյուջեների ծախսերի ուսումնափրությունը ցույց է տալիս, որ մինչև 2010թ այս ոլորտում չնշին գումարներ են հատկացվել: Այսպես, քաղաքային համայնքների այս ոլորտում ծախսեր չի կատարվել, գյուղական համայնքներում ծախսեր չեն կատարվել Շիրակի և Լոռու մարզերում:

Կարևորելով գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրը՝ «Շուկայական հնարավորություն ֆերմերներին» ծրագրով 2010թ. գյուղական տարածքներում բարելավվել է գյուղատնտեսական մթերքների իրացման գործունեության արդյունավետությունը և փոքր ու միջին ձեռնարկությանը խթանող արտադրական և սպասարկմանը կարևորված ենթակառուցվածքները:

Այս նպատակով հանրապետության ծրագրային տարածքի 25 համայնքներում սկսվել են իրականացվել ենթակառուցվածքների վերականգնման նոր ծրագրեր 891.6 մլն դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում 3 համայնքներում իրականացվել են ոռոգման և խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգումներ, խորային հողերի հորատում, գետերի հունի և դրենաժային համակարգի մաքրում և վերականգնում, 9 համայնքներում գազաֆիկացման աշխատանքներ, 1 համայնքում ավտոճանապարհների վերանորոգում և ասֆալտապատում: Շարունակվում է 31 համայնքներում տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքներ, 15 համայնքներում՝ ոռոգման և խմելու ջրի ջրամատակարարման ցանցերի կապիտալ նորոգումներ և վերականգնում, իսկ 16 համայնքում՝ գազաֆիկացում:

Գյուղական տարածքներում ներդրումների հիմնադրամի «ՖԲԵԴԱ» միջոցով հաստատվել է 280.0 մլն դրամի բաժնետիրական ներդրում թռչնարուծության և պահածոների արտադրության ոլորտում:

«Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսություն» ծրագրի կողմից համայնքներին տրամադրվող դրամաշնորհների միջոցով կատարվել են ՀՀ Լոռու մարզի Այրում համայնքի գազաֆիկացման, Տավուշի մարզի Թովուզ համայնքի խմելու ջրի բարելավման, Գեղարքունիքի մարզի Լուսակունք համայնքի ոռոգման ջրագծի կառուցման և Աղունք համայնքի խմելու ջրի բարելավման աշխատանքները:

«Թռչնագրիսի հակագրման ծրագրով» ավարտվել է Մեղրիի սննդամբերքի անվտանգության, անասնաբուժական և բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետի կառուցման և Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոնի շենքի կառուցման աշխատանքները:

ՀՀ 2011թ. տարվա վերջին ներկայացված «Համայնքների գյուղատնտեսական ուսուրաների կառավարման և մրցունակություն» վարկային ծրագրի «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթարադարձիցի շրջանակներում նորարարական առաջարկությունների փորձարկման նպատակով իրականացվելու է «Տեխնոլոգիաների զնահատման» ծրագրեր 21572.0 դրամի, որից 16178.4 հազար դրամ հատկացվելու է ծրագրի վարկային միջոցներից, իսկ 5394.2 հազ. դրամ՝ մասնակից ֆերմերների կողմից:

Ինչ խոսք, համայնքներում իրականացվող նմանատիպ ծրագրերը նպաստավոր պայմաններ են ստեղծում գյուղատնտեսական տնտեսությունների համատեղ գործունեության կազմակերպման ձևերի ստեղծմանը և ամրապնդմանը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում գյուղատնտեսական համայնքների գարգացման հետանկարային ուղղվածությունը կապված է պետական ֆինանսական աջակցության և այդ ուղղությամբ նպատակային պետական քաղաքականության իրականացման հետ, ոլորտում առկա խնդիրներին լուծում տալու համար: